ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գեղագիտական դաստիարակությունը միջին և ավագ դասարաններում՝ գրականության դասավանդման ժամանակ

Կատարող՝ Սիլվա Ղազարյան

Գյումրու թիվ 23 միջն. դպրոց

հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն 2

Ներածություն 3

Ի՞նչ է գեղագիտությունը . գեղագիտական դաստիարակություն 3

Գեղագիտական կարգեր(կատեգորիաներ) 5

Գրողների գեղագիտական հայացքները 7

Ներառարկայական և միջառարկայական կապի պահպանումը գրականության դասերին . մեթոդների և հնարների կիրառումը 9

Պատկերավորման միջոցները՝ որպես գեղեցիկը ընկալելու,զգալու գնահատելու կարողություն 14

Եզրակացություն 16

Գրականություն 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք սիրում ենք գեղարվեստական գրականությունը, հիանում գեղարվեստական բարձրարժեք երկերով:Գեղարվեստական գրականության ընթերցումը կենսական պահանջ է: Արվեստի բազմազան տեսակների բուռն զարգացման, նրանց արտահայտչական միջոցների հարստացման, մարդկանց հետ կապի ընդլայնման պայմաններում անգամ գրականությունը մնում է ամենահաճելի զրուցակիցը:Գրականությունը պատմում է մարդու մասին, կյանքի մասին, ունի ճանաչողական և դաստիարակչական նշանակություն, ունի անսպառ հնարավորություններ՝ մարդու հոգու ծալքերը թափանցելու, կյանքն ամբողջ լայնությամբ և խորությամբ արտահայտելու համար:

Գեղարվեստական խոսքը ունի լրացուցիչ գեղագիտական դեր,զարգացնում է ճաշակ: Դա էլ գրողից պահանջում է արտահայտչական համապատասխան լրացուցիչ միջոցների խստագույն ընտրություն, խոսքի գեղագիտական մշակում:

Դարերի պատմություն ունի հայ գրականությունը և, բնականաբար, հնարավոր չէ բոլոր երկերից օրինակներ բերել,ուստի փորձել եմ աշխատանքիս մեջ անդրադառնալ ամենակարևորներին:Աշխատանքիս նպատակն է ծանոթացնել գեղագիտական կարգերին(կատեգորիա),ցույց տալ մեթոդների և պատկերավորման միջոցների դերը գեղագիտական դաստիարակության գործում,բացահայտել աշակերտներին գեղագիտության տարրերին հաղորդակից դարձնելու ուղիները:Խնդիր եմ դրել գտնել մեթոդական ուղիներ՝ դպրոցներում գեղագիտական դաստիարակության որակը բարձրացնելու համար:Վերջում կիմանանք `ինչպես կիրառել մեթոդները,որ աշակերտի մոտ ձևավորենք գեղագիտական ճաշակ և կբացահայտենք աշակերտներին գեղագիտության տարրերին հաղորդակից դարձնելու ուղիները:

Ի՞ՆՉ Է ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ Էդ. Աղայանի՝1.փիլիսոփայական ուսմունք արվեստի մասին,գեղարվեստական ստեղծագործության, կյանքի ու բնության մեջ գեղեցիկի դրսևորման ձևերի մասին:

2.Գեղագետ լինելը: 3. Գեղեցիկի՝ կատարյալ ձևերի սեր:4 Ծայրահեղ ձևապաշտություն արվեստի մեջ:

Գեղագիտություն բառի արմատներից մեկը՝ գեղ, նշանակում է կանչել: Այսինքն գեղեցիկը մեզ կանչում է, հստակ արտահայտություն է տալիս մեր հոգում ննջած այս կամ այն տրամադրությանը: Գեղագիտությունը (հունարեն՝ aisteticos- զգայությամբ ընկալվող) որպես գիտություն ձևավորվել է 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից: Մարդը միշտ էլ ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անբաժանելի մասը: Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկը:Դա է պատճառը,որ գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկի ձևավորումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում է նրա ստեղծագործական ունակությունները:

Գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է սովորողի արժեհամակարգը և զարգացնում նրա գեղագիտական ու ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է բարոյական դաստիարակության հետ:

Ամփոփենք այսպես. գեղագիտական դաստիարակության շնորհիվ մենք դաստիարակում ենք իսկական մարդ:

Գեղագիտական կարգեր(կատեգորիաներ)

Գեղագիտական կարգերը արտահայտում են իրականության շատ երևույթների համար բնորոշ էսթետիկական հատկանիշները: Այդ կարգերն են գեղեցիկը, վեհը, ողբերգականը, կոմիկականը:Այսինքն ուսուցանելու ժամանակ պետք չէ շեշտը դնել միայն գեղեցիկը տեսնելու վրա: Մենք պետք է սովորեցնենք աշակերտներին անգամ ողբերգականի մեջ տեսնել գեղագիտականը: Գեղեցիկը և վեհը երևան են գալիս ոչ միայն կյանքում,այլև բնության մեջ; Այնինչ կոմիկականը և ողբերգականը հատուկ են միայն հասարակական երևույթներին:

Գեղեցիկը: Սա հիմնական կարգն է, որովհետև գեղեցիկը արվեստի ելակետն ու նպատակն է:Մնացած կարգերը ծառայում են գեղեցիկի՝ իբրև մարմնավորված իդեալի, հաստատմանը:

Վեհը: Սերտորեն կապված է գեղեցիկի հետ:Հասարակական կյանքում վեհը մեծ մասամբ կապվում է արարքների և բնավորության հերոսականության հետ: Բնության մեջ վեհը աչքի է ընկնում քանակական մեծ չափերով, տարերքով ու թափով (ծովի ալիքներ, փոթորիկ, ամպրոպ ու կայծակ…): Դա մեզ տոգորում է հոգեկան վերելքի, հպարտության զգացումով, ուժ է տալիս կենսական պայքարում: Աշակերտը պետք է կարողանա հայ գրողների ստեղծագործություններում տեսնել վեհը:

Ողբերգականը: Կյանքում և արվեստում մենք ողբերգական ենք անվանում հասարակական և բարոյական իմաստով արժանավոր անձնավորության կործանումը:Բայց ամեն մի դժբախտություն դեռևս գեղագիտական իմաստ չունի; Անհրաժեշտ է հստակ պատկերացնել ողբերգականի բնույթը, պատճառներն ու հետևանքները: Եթե անհատի մահը կապվում է հասարակական հետևանքներին, այն արդեն ողբերգական բովանդակություն է ստանում: Դուրյանի և Մեծարենցի մահը ողբերգական փաստ է, որովհետև մենք գիտակցում ենք այն մեծ կորուստը, որ նրանց մահով կրել է հայ գրականությունը: Ողբերգական են նաև անձնական բնույթ ունեցող, սիրուն և երջանկության հարցերին վերաբերվող կոնֆլիկտները:

Թումանյանի Անուշն ու Սարոն,Շեքսպիրի Ռոմեոն և Ջուլիետը ողբերգական կերպարներ են: Նրանց զգացմունքների մաքրությունը բախվում է տիրող պայմաններին:Ողբերգական անհատն ունի հասարակական և բարոյական բարձր արժանիքներ, կամքի միասնություն,գեղեցիկ իդեալներ,որոնց հաստատման համար նա ակտիվորեն պայքարում է:

Ողբերգականը մարդկային բարձր արժանիքների և ձգտումների խորտակման ծանր տպավորությունն է: Մենք կարեկցում ենք հերոսին, որը զոհվել է հանուն հայրենիքի, բայց նրա ողբերգությունը մեզ տոգորում է լուսավոր զգացմունքով, մարդկային լավագույն ձգտումների վեհության գիտակցությամբ: Հենց այստեղ պետք է տեսնենք գեղագիտական դաստիարակիչ նշանակությունը: Մարդու մահվան ողբերգությունը հաղթահարվել է հայրենասիրական սխրագործության միջոցով անմահանալու մեջ:

<<Մահ իմացյալ անմահություն է>>,-ասել է Եղիշեն: <<Բայց երանի՜,ով իր ազգի ազատության կզոհվի>>,-ասել է Մ.Նալբանդյանը: Ազնիվ գործով սերունդների սրտում բարի հիշատակ թողնելու համոզմունքով Թումանյանը ասել է.<<Երնեկ նրան, ով իր գործով կապրի անվերջ,անդադար>>:

Ողբերգականը սերտորեն կապված է հերոսականի ըմբռնման հետ, քանի որ ողբերգական կերպարները մեծ մասամբ մարտնչում են իրենց իդեալների համար: Չպետք է նույնացնել ողբերգականը և ողբերգությունը: Ողբերգությունը գրական-դրամատիկական տեսակներից մեկն է, իսկ ողբերգականը՝ իբրև գեղագիտական կարգ, կարող է հանդես գալ նաև գրական մյուս տեսակների մեջ: Եթե վերցնենք հայ գրականությունը, ապա կտեսնենք, որ մեծ կամ փոքր չափերով արտացոլվել են գրական շատ ժանրերում՝ վեպ(<<Նամուս>>,<<Պայքար>>), վիպակ(<<Աննա Սարոյան>>, <<Չար ոգի>>),պատմվածք(<<Գիքորը>>, <<Արտիստը>>), պոեմ(<<Անուշը>>,<<Հարձը>>),բանաստեղծություն(<<Լճակ>>,<<Տրտունջք>>)և այլն:

Կոմիկականը: Ի՞նչ բովանդակություն ունի կոմիկականի գեղագիտական ըմբռնումը:: Անձնավորությունը կամ երևույթը ներկայանում են ավելի ցածր բովանդակությամբ, քան սկզբում փորձում են երևալ իրենց արտաքին տվյալներով: Ծիծաղելի է , երբ մեծ խելքի հավանականություն ունեցող մարդը մեր ատջև կանգնում է ներքին դատարկությամբ(<<Մեծապատիվ մուրացկաններ>>):Բայց հակառակ դեպքում(երբ

արտաքին հատուկ տվյալներ չունեցող մարդը երևան է բերում մեծ խելք կամ սխրագործության է դիմում), բոլորովին կոմիկական չէ: Ընդհակառակը, դա վեհ է, գեղեցիկ, որովհետև գնահատման հիմնական չափանիշը միշտ մարդու ներքին էությունն է:Վերցնենք Սունդուկյանի ստեղծած Զիմզիմովի և Զամբախովի կերպարները: Իրենց էությամբ դրանք խիստ բացասական , վնասակար, ստոր անձնավորություններ են,: Մենք զգում ենք նրանց մագիլները, որոնք պատրաստ են հոշոտել անպաշտպան զոհին: Բայց իբրև կոմիկական կերպարներ, նրանք ցուցադրական են իրենց ներքին թուլությամբ, հիմարությամբ, որը մեզ իրավունք է տալիս ոչ միայն ծիծաղել նրանց վրա, այլև զգալու նրանց պարտության հեռանկարը:

Գրականության մեջ մշակվել են գեղարվեստական պատկերավորության բազմաթիվ միջոցներ, որոնցից պետք է հիշատակել իրոնիան, սարկազմը(երևույթի բացասական գնահատականը), հիպերբոլը (չափազանցում),գրոտեսկը (իրականության ֆանտաստիկ արտացոլում), ալեգորիան (կյանքի այլաբանական պատկերում) , պարոդիան (գրական ստեղծագործության ներքին թուլությունների ծաղրում՝ նրանց բնորոշ առանձնահատկություններին նմանվելու միջոցով) և այլն:

Երգիծական գրականության մեջ բացասականը միշտ մերկացվում է գեղագիտական իդեալի հաստատման համար:

Գրողների գեղագիտական հայացքները

Գրողներից շատերը հաճախ դիմում են բնության այս կամ այն երևույթի միջամտությանը: Դա հատկապես պարզորոշ երևում է Համո Սահյանի, Բակունցի ստեղծագործություններում: Օրինակ <<Ալպիական մանուշակում>> նկարագրված է լեռնային ծաղիկ, որի կերպարով հանդես են գալիս պատմվածքի բազմազան թեմաները՝ հայրենի բնանկարի գեղեցկությունը, մարդու և բնության հարաբերությունը, հայ գյուղացու ցավն ու ողբերգությունը, հեղինակի գեղագիտական ըմբռնումը: Մանուշակի <<միջամտությամբ >> Բակունցն արտահայտում է այն միտքը, որ չնայած երկիրն ունի այսպիսի վեհ գեղեցկություն, բայց հայ գյուղացին , նրանով հիանալու փոխարեն, տրվել է առօրյա հոգսերին: Մանուշակը դառնում է խորհրդանիշ, որի օգնությամբ Բակունցը ներկայացնում է հնագետի հոգու չորությունը, նկարչի ավերված սիրո հուշը(<< Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում …. ալպիական ծիրանագույն մանուշակներ>>):

<<Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան>>: Բնության երևույթի և մարդկային կյանքի միջև անցկացրած զուգահեռով Բակունցը հերքում է կյանքի մասին պարզունակ պատկերացումները: Նա արտահայտում է այն միտքը, որ մարդկային կյանքը այնքան բարդ է, որ չի կարող տեղադրվել<<ծիրանագույն բուրաստանի >> սահմաններում: Այստեղից էլ Բակունցը հանգում է գեղագիտական հետևությանը.<<Արվեստագետը չպետք է բավարարվի առաջին թռուցիկ տպավորություններով: Նա պետք է խորանա երևույթների մեջ և հասնի էությանը: Սա է ճշմարիտ արվեստի ճանապարհը>>:

Ուզում եմ անդրադառնալ նաև Պ.Սևակի գեղագիտական հայացքներին, որոնց անպայման պետք է ծանոթացնել աշակերտներին: Սևակի և՛ բանաստեղծություններում, և՛ քննադատական հոդվածներում, և՛ նամակներում կան գրականությանը վերաբերող բազմաթիվ մտքեր, որոնք ներկայացնում են գեղագիտական հայացքների մի կուռ համակարգ: Նամակներից մեկում նա ամենադժվարին խնդիրը համարում է արվեստի ճշմարտության յուրացումը: Հետագայում նրա գեղագիտական հայացքներն ավելի խոր և ամբողջական տեսք են ստանում:Նա կարևորում է բառի արժեքն ու կշիռը և մտահոգված է բանաստեղծական ձևի և կառուցվածքի նորացման խնդիրներով:Ժամանակակից բանաստեղծության գլխավոր խնդիրը Սևակը համարում է մարդու հոգեկան << ներքին անձավների>> նվաճումը: Նա կարևորում է << արվեստի արհեստը>>:

Հ.Շիրազ՝ մի բանաստեղծ,ում պոեզիան հորդաբուխ հուզականություն ունի: Իր մտքերը հեղինակն արտահայտում է վեհաշունչ պատկերավորությամբ, հանդիսավոր խոսքով: Պոետը դիմում է լեռանը՝որպես վեհի, գեղեցիկի խորհրդանշան, արևին, բարձունքին, արծվի թռիչքին: Նրա քնարի հատկանիշներից է պատկերի գեղանկարչական հագեցումը:

Ուսուցիչը պետք է կարողանա գրականության դասաժամերին աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել ստեղծագործությունների գեղագիտական կողմին,զգալ մարդու և աշխարհի միասնությունը:

Ներառարկայական և միջառարկայական կապի պահպանումը գրականության դասերին. մեթոդների և հնարների կիրառումը

Դասավանդման արդյունավետությանը խիստ նպաստում է հարակից առարկաների, արվեստի ճյուղերի համադրմամբ նյութի մատուցումը:Եթե ընթացիկ ծրագրային դասանյութն ունի աշխարհագրության, հայրենագիտության, պատմության , երաժշտության, արվեստի մյուս բնագավառների հետ աղերսներ, ապա դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա: Ներկայացնենք մի հետաքրքիր հանձնարարություն, երբ ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները կարդում են բնանկար կամ նկարագրություն պարունակող երկը, վերլուծում, դատողություններ անում և լրացնում<< Քառաբաժան>> աղյուսակը: Օրինակ՝ 6-րդ դասարանի աշակերտները Վ.Դավթյանի <<Լիճը>> բանաստեղծության վերլուծությամբ աղյուսակը լրացնում են այսպես:

Ի՞նչ տեսա Կապույտ ու սպիտակ գույներ, ճայեր, աստղեր, լեռներ, արև…	Ի՞նչ լսեցի Պատարագի մեղեդի, ճայերի ձայներ, ալիքների ծփանք…
Ի՞նչ զգացի Երանություն, մաքրության բերկրանք, հաճույք, անափ երջանկություն…	Նոր վերնագիր <<Կապույտ երազ>>

Հաջորդ դասի համար աշակերտները ուսուցչից հանձնարարություն են ստանում նկարելու և գույների օգնությամբ ամբողջացնելու բնագրի մեջ ամփոփված մտքերը, ապա լրացրած աղյուսակի ու բանավոր վերլուծության շնորհիվ դասանյութը վերարտադրել նկարների: Նույն սկզբունքով կարելի է ուսումնասիրել Ավ. Իսահակյանի <<Գետակի վրա>>, Վ.Տերյանի <<Աշնան>>, Հովհ. Շիրազի <<Գարնանամուտ>> և այլ հեղինակների նմանատիպ ստեղծագործություններ: Այսպես նպաստում ենք սովորողների կողմից գրական երկի նյութի տեսանելի

զգայական ընկալմանը. աշակերտը կարդում է հատվածաբար,այն վերածում նկարի, ընտրում բնագրից բխող գույներ,ավելացնում ստեղծագործական ինքնուրույն երանգներ, բանավոր խոսքով հիմնավորում նկարն ու բնագիրը:Այսպիսով նպաստում ենք նրա գեղագիտական ճաշակի զարգացմանը: Միջին դպրոցի <<Մայրենիի>> և <<Գրականության>> դասագրքերում շատ են բանաստեղծությունները, որոնք երգի են վերածված: Օրինակ՝ Ավ. Իսահակյանի<<Գետակի վրա>>, Ս. Շահազիզի <<Երազ>>, Պ.Սևակի << Էրեբունի-Երևան>>,Եղ. Չարենցի<<Ես իմ անուշ Հայաստանի>> և այլն: Կան ստեղծագործություններ,օրինակ՝Մ.Գալշոյանի<<Կռունկ>>,Շ.Ազնավուրի <<Ազնավուրը Ազնավուրի մասին>>, որոնք հնարավոր չէ ուսումնասիրել առանց երաժշտությունն ունկնդրելու, ստացած տպավորությունները մեկնաբանելու:Երաժշտության ազդեցությամբ նյութի յուրացումը արդյունավետ է դառնում, քանի որ ստեղծվում է զգացմունքային տրամադրվածության անկաշկանդ բանական մթնոլորտ, ուր գործի են դրվում երեխաների զգայարանները: Առանձին ստեղծագործություններ՝ Ա. Բիտովի <<Մատենադարան>, Ա. Այվազյանի <<Պոեմ վասն շենքի և շինության>>, Ա. Պարսամյանի <<Լռություն է>>, կապ ունեն ճարտարապետության՝հատկապես հայկական խաչքարերի պատմության հետ, որոշ նյութեր՝ կինոարվեստի, հայ ժողովրդի պատմության , ավանդազրույցների հետ:Յուրաքանչյուր նյութի ուսուցման ընթացքում ուսուցիչն ինքն է որոշում, թե ինչ հնարներ կիրառի , որ նպաստի աշակերտների գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Ավագ դպրոցում շահեկան է հայ գրականության դասերին դիմել այլ ժողովուրդների գրականության համարժեք գլուխգործոցներին: Ավ, Իսահակյանի գեղարվեստական արձակին ծանոթացնելիս արևելքի շենշող բնանկարի, կոլորիտի, մտածողության վերաբերյալ պատկերացում տալու նպատակով կարելի է դիմել Արևելքի գրական հուշարձաններին:Վարպետը գեղեցկության անդրանիկ կերպարի մասին աստվածաշնչյան լեգենդը մշակելիս գրում է.<<Բարի է, որովհետև գեղեցիկ է>>(<<Լիլիթ>>): Սա մարդկային ներքնաշխարհի հոգեբանական վերլուծության դասական մոտեցում է, որ հին է նույնքան,որքան Աֆրոդիտեի,Աստղիկի,Աթենասի հրաշակերտ արձաններն են հին: Լիլիթի հրեղեն կատարելությունը հատկապես

լուսափայլ է երևում , երբ հանդիպադրվում է հողեղեն Ադամին.<<Լիլիթ ուշի-ուշով նայեց Ադամին, և կավի հոտ զգաց իր հոտոտելիքը…>>,<<Լիլիթ,երբ տեսավ, որ Ադամի ցոլքը խառնվեց իր պատկերին, զայրացած ոտքի ելավ…>>: Այստեղ արդեն կարելի է աշակերտներին ներկայացնել Դաո դե Ցզինի<<Գիրք ճանապարհի և առաքինության մասին>> գրքից մեկ հատված, որտեղ պարզ երևում են հակադրությունների միասնությունը և առաքինությունը: <<Երբ աշխարհում բոլորն իմանում են, որ գեղեցիկը գեղեցիկ է, հայտնվում է տգեղը: Երբ բոլորն իմանում են , որ բարին բարի է, չարն է առաջանում: Այդ պատճառով գոյն ու չգոյը ծնում են միմյանց, դժվարն ու դյուրինն իրար են ստեղծում,միմյանց հետ կապված են կարճն ու երկարը, բարձրն ու ցածրը որոշվում են միմյանցով, ձայները դառնում են ներդաշնակ>>:<<Լիլիթի>> գեղագիտական կողմը տեսնելու համար կարելի է ընթերցել տալ Թագորի արձակ բանաստեղծությունները: <<Նա եկավ այն պահին, երբ գիշերը խաղաղ էր.նրա ձեռքին տավիղ կար, և նրա մեղեդիներից իմ երազները հնչուն դարձան…>>: Սա զգայապատկեր է Թագորից,որը կօգնի ավելի լավ ըմբռնել <<Լիլիթ>>-ում արտահայտված գաղափարները:

Ենթադրենք՝ ուսումնասիրում ենք Մեծարենցի բանաստեղծությունները: Այս դեպքում ևս կարելի է անդրադառնալ այլ հեղինակների: Արևելքի ժողովուրդների կյանքն անխզելիորեն կապված է բնության հետ: Ըստ ճապոնական բնապաշտության՝ անխզելի կապ կա մարդու, տիեզերքի և բնության միջև: Բնության ակնարկն է ծնում տեսազգացական պատկերի գեղագիտությունը և ազնվացնում մարդու հոգին: Հենց սա էլ պետք է ի նկատի ունենա ուսուցիչը, երբ պատրաստվում է դասարան մտնել:Ահա մի բնապատկեր՝Սոկո Խոենի <<Միայն այնտեղ>>-ից.

Միայն այնտեղ,ուր թափվումէ ծաղիկը բալենու,-
Թեկուզ գարուն է, բայց սավառնում են օդում
Ձյան փաթիլները…

Եվ Մեծարենցը.<<Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե բուրումներով օծուն հովիկն իրիկվան…>>:

Մեծարենցի լուսաբաղձ հոգու համար ևս բնությունը դյութական հանգրվան է, միայնակ մարդու դրամատիկ լուռ ապրումների սպեղանի: Այն ներկայացված է Արևելքի մտածողությանը բնորոշ գեղարվեստի փիլիսոփայությամբ:

Գեղագիտական ճաշակ զարգացնելու նպատակով անհրաժեշտ է նաև ներառարկայական կապի ստեղծումը: Դուրյանի <<Տրտունջքը>>վերլուծելիս հիշում են Ֆրիկի,Նալբանդյանի աստվածամարտությունը:

Աշակերտները պետք է հասկանան,որ մեր գրականությունը հարուստ է այնպիսի ստեղծագործություններով,որոնցում բնությունը մերթ թարգմանում է հերոսի հոգեկան ապրումները,մերթ լրացնում նրա արտաքին գեղեցկությունը, երբեմն ընդգծում բարու և չարի , գեղեցիկի ու տգեղի հակադրությունը:

Գեղագիտական դաստիարակությանը նպաստում է նաև երաժշտությունը: Երաժշտությունը և գրականությունը մոտ են , քանի որ երկուսի արտահայտումը տեղի է ունենում շարժման և ժամանակի մեջ՝մեկը խոսքի, մյուսը՝ հնչյունների միջոցով, և անմիջականորեն ներգործում են մարդու հուզաշխարհի վրա: Երաժշտությունը սովորեցնում է կարեկցել, զգացմունքային վերաբերմունք դրսևորել,տեսնել գեղեցիկը: Թեման ուսումնասիրելիս երաժշտությունը օգնում է աշակերտներին արձագանքել լավ արարքներին, ակտիվացնել մտավոր գործունեությունը:Անցնել <<Անուշ>> թեման և չդիտել <<Անուշ>>օպերայից հատվածներ, չլսել <<Ամպի տակից>> երգը,նշանակում է երեխային զրկել հայ ազգային մշակույթի գոհարները ճանաչելուց:Ուսուցիչը ավագ դասարաններում դասավանդելիս չպետք է անտեսի նաև այլ հարակից առարկաների համադրումը:

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը , որը կարող է բարելավել կյանքը:

Բ. Ֆ. Սքիներ

Արդյունավետ դասավանդելու համար ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների,դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Նոր և շատ մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ է, սակայն բավարար պայման չէ արդյունավետ դասավանդման համար: Կարևոր է մեթոդները հմտորեն համադրելու

և նպատակահարմար կիրառելու մասնագիտական հմտությունը, ինչը ենթադրում է մասնագիտական լուրջ պատրաստություն և փորձառություն:

Դասաժամերի ընթացքում գեղագիտական ճաշակ ձևավորելու համար նախընտրելի են մի քանի մեթոդներ:Ներկայացնեմ մի քանի մեթոդների համառոտ բնութագրումը:Մեթոդները ներկայացնում եմ մեկ հեղինակի ստեղծագործությամբ,բայց դրանք կիրառելի են նաև այլ ստեղծագործություններ ուսումնասիրելիս:

Երեք մաս ունեցող օրագիր

Ուսուցիչը Մեծարենցի ստեղծագործություններից ընտրում է գեղագիտական արժեք ներկայացնող հատվածներ: <<Հո՞վը, գինով աղջիկ մըն է կարծես հո՞վը, ծփացիկ պարեգոտով հո՞վը, գիշերվան դողահար ու բուրումնավե՞տ հովը, որ ջուրերուն վրա խո՞լ ու տատանուտ շրջապար մը կը դառնա հուլորեն, գիշերին մեջ՝ որ ցրտին է ու դողդոջուն>>(օրինակի համար ներկայացնում եմ մեկ հատված):Դրանք բաժանում է նախապես խմբերի բաժանված աշակերտներին: Խմբերն առաջին սյունակում արտագրում են հատվածը, երկրորդում գրում են գրական հայերենը, իսկ երրորդում՝ մեկնաբանություն:

Հինգ բոպեանոց շարադրանք

Ենթադրենք ուսումնասիրվել է Հ.Սահյանի <<Անտառում>> բանաստեղծությունը:

Վերջում աշակերտները գրում են իրենց տպավորությունների մասին՝ գործածելով հեղինակի բառերն ու արտահայտությունները:

Բառ-բանալի

Ուսուցիչը նոր նյութը ուսումնասիրելուց առաջ տալիս է 5-6 բառ ուսումնասիրվելիք ստեղծագործությունից: Աշակերտները գրում են շարադրանք՝ գործածելով այդ բառերը:Հետո ձևավորվում են փոքր խմբեր: Խմբերում քննարկում են, խմբի անդամների հորինած պատմությունները և կայացնում որոշում, թե որ պատմություններն են ներկայացվելու ամբողջ դասարանին:Ընթերցումներն ավարտելուց հետո կարդում են նյութը և համեմատություն անցկացնում իրենց ստեղծած պատմությունների և հեղինակային պատմության միջև:

Համո Սահյանը բանաստեղծ-գեղանկարիչ է: Նրա ստեղծագործությունները ուսումնասիրելիս կարելի է կիրառել այս մեթոդը: <<Զրնգում է կանաչ քամին>> բանաստեղծությունն է ընտրված:

Քառաբաժան

Ի՞նչ գույներ տեսա Կանաչ,կարմիր,դեղին,ճերմակ, խարտյաշ	Ի՞նչ ձայներ լսեցի Կյանքի շարժումը խորհրդանշող քամու ձայն, այդ քամու թռիչքի ձայնը տարիների միջով,թախծոտ երաժշտություն
Ի՞նչ զգացումներ ունեցա Տեսա այն մարդուն, որը կյանքի տարբեր հասակներով նայում է աշխարհին և ափսոսացի:	Երկու բանալի բառ քամի, ծերություն

Պատկերավորման միջոցները՝ որպես գեղեցիկը ընկալելու, զգալու,գնահատելու կարողություն

Գեղարվեստական ստեղծագործության լեզուն իրավացիորեն համարվում է միջոց , և հենց այդպես էլ ասում են՝ լեզվական միջոցներ:Այդ տեսակետից ամեն մի գրական ստեղծագործության լեզու հաջող կարելի է համարել, եթե այն առավել ճշտությամբ է կարողանում արտահայտել հեղինակի զգացմունքներն ու մտքերը, նրանց բազմապիսի նրբերանգները: Լինում են հեղինակներ,որոնց ստեղծագործություններում լեզվական , ոճական հնարանքները գեղագիտական այնպիսի բարձր մակարդակի են հասնում , որ դրանք սոսկ <<միջոց>> անվանելը քիչ է թվում: Լեզուն ինքը դառնում է մի տեսակ գեղարվեստական ստեղծագործություն, կախարդիչ արվեստ:

Գրողները միատեսակ վերաբերմունք չունեն պատկերավորման միջոցների գործածության հարցում: Օրինակ Հովի. Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն առանձնապես հակում չեն ունեցել դրանց առատ գործածմանը: Պատկերավորման

միջոցների նկատմամբ գրողների վերաբերմունքը պայմանավորված է լինում ոչ միայն նրանց անհատական օժտվածությամբ , այլև ստեղծագործության ժանրային հանգամանքով, թեմայի գեղարվեստական մարմնավորման նպատակադրման բնույթով և այլն: Ծավալային առումով հնարավոր չէ խոսել բոլոր գրողների գործածած պատկերավորման միջոցների մասին, ուստի կխոսեմ Բակունցի ստեղծագործություններում առատորեն գործածված միջոցների մասին:

Բակունցը խոսքի նկարչությամբ լուծում է ստեղծագործական բարդ խնդիրներ՝նկարագրել և հնարավորություն տալ ընթերցողին <<շոշափել>> նկարագրությունը: Որևէ ստեղծագործություն ուսումնասիրելիս հանձնարարում եմ գտնել այնպիսի հատվածներ, որտեղ Բակունցի <<նկարչական իմպրովիզացիան>>հաջողությամբ զուգակցվում է նրա արձակի երաժշտականության հետ: Նմանատիպ աշխատանքները աշակերտները սիրով են կատարում:Նույնիսկ այդ հատվածները համեմատում են բանաստեղծության հետ:Հետաքրքիր վերլուծություններ են անում <<Միրհավը>> վերլուծելիս: Աշակերտներից մեկը այսպես վերլուծեց <<Միրհավը>>.

<<Միրհավը>> սքանչելի մի համերգ է՝հայրենի ուշ աշնան, արևի, խաղողի հնձանի, ծաղիկների, ոսկեդեղձան հյուսերով աղջկա՝ Սոնայի և Դիլան դայու սիրո պատկերներով:

Իսկապես, պատմվածքն ամբողջությամբ գրված է երաժշտության և նկարչության տարրերի ամուր հյուսվածքի միջոցով: Տարբեր մեթոդներ և հնարներ (<<Քառաբաժան>>,<<Մանրապատում>>, <<Խմբային հետազոտություն>>,<<10-ը րոպեանոց շարադրություն>>.<<Խառնված հերթականություն>> և այլն) եմ կիրառում,որ աշակերտները ըմբռնեն հատվածների կարևորությունը:

Բակունցը բառագործածության վարպետ է: <<Բառի էսթետիկան>> զգալու,նուրբ ճաշակով և համապատասխան կոնտեքստում կիրառելու, բառերին իմաստային ամենատարբեր նրբերանգներ հաղորդելու, մայրենի լեզվի բառապաշարի պոետական շռայլ հնարավորություններն ու խոսքի ներքին ուժը բացահայտելու տեսակետից հայ գրականության մեջ նա առաջնակարգ տեղում է կանգնած: Բակունցը կարողանում է հնչեցնել բառերի իմաստը,թանկարժեք ադամանդի պես

տեսանելի դարձնել բառի արձակած պոետական ճառագայթը: Ահա աշնան նկարագրությունը <<Միրհավ>> պատմվածքում.

-Աշուն էր,պայծառ աշուն…

- Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ,դառնաշունչ քամով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում,տանում հեռու ձորերը…

- Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը:

Այս հատվածում բառերը գեղեցիկ են հնչում ոչ միայն այն բանի պատճառով , որ ճշգրիտ արտահայտում են նկարագրվող երևույթի բովանդակությունը,այլև այն բանի շնորհիվ, որ ամեն մի բառ ամրապնդում է հայրենի հողի նկատմամբ նվիրական սիրո զգացմունքը: Բակունցի պատկերները հայտնություն են իսկական իմաստով՝ ծնված կյանքի, բնության, միջավայրի անմիջական տպավորություններից: Տարբեր տեսակի բառային աշխատանքները(ածականի հետադաս գործածության դեպքերի, հոմանիշների, հականիշների դուրսբերում,դրանցով նախադասությունների կազմում և այլն)կնպաստեն աշակերտների բառապաշարի հարստացմանը և գեղագիտական դաստիարակությանը:

Եզրակացություն

Դպրոցում կրթական գործունեությունը նախատեսված է աշակերտին սովորեցնել սովորեցնելու համար: Դա նրան թույլ կտա ապագայում ինքնուրույն սովորել:

Ուսուցիչը սովորեցնելու ընթացքում պետք է կարևորի ոչ միայն գիտելիքները, այլև աշակերտների բարոյական և գեղագիտական դաստիարակությունը:

Ի մի բերելով ներկայացված աշխատանքը՝կարող ենք փաստել, որ այս աշխատանքի հիմնական սկզբունքները որքան էլ տրամաբանական են, այդուհանդերձ պայմանական են: Ամեն ուսուցիչ ինքը պետք է պրպտի , գտնի համապատասխան ձևեր, մեթոդներ, հնարներ՝ աշակերտի գեղագիտական դաստիարակությունը ապահովելու համար:

Գրականություն

Ս. Ալիխանյան, Ուսուցման իմ փորձից, Երևան,1990

Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան,1976:

Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Երևան,1965:

Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Երևան,1965

Հ.Մելքոնյան, Ավետիք Իսահակյանի գեղարվեստական արձակի լեզուն և ոճը, Երևան,1990

Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան,1967

Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ,վարժություններ, Վանաձոր, 2008:

Էլեկտրոնային պաշարների շտեմարան: